

## ՀՀ Աժ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի 2010թ. մարտ ամսվա հաշվետվություն

### Ելույթներ Աժ ամբիոնից

- 15.03 Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի եւ աղետի գոտու բնակարաշինություն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ:
- 16.03 «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:
- 16.03 «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:
- 17.03 «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:
- 18.03 «Հարկերի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» եւ «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

### Հարցեր Աժ ամբիոնից

- 15.03 Հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ
- 16.03 «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:
- 16.03 «Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:
- 17.03 Կառավարությանը հարցում` 16-րդ թաղամասի գազաֆիկացման եւ տրանսպորտային խնդիրների վերաբերյալ:
- 18.03 «Հարկերի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» եւ «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:
- 18.03 «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:
- 18.03 «Իրավական ակտերի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ «Աժ կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթի վերաբերյալ:

### Հայտարարություններ

- 16.03 Գների բարձրացման եւ կառավարության վարած հակասոցիալական քաղաքականության վերաբերյալ:

### Խորհրդարանական ժամ

- 16.10 Արմեն Մարտիրոսյանը Հանրային հեռուստաընկերության «Խորհրդարանական ժամ» հեռուստածրագրի շրջանակներում խոսեց հայ-թուրքական հարաբերությունների վերջին զարգացումների մասին:

### Սեմինար-քննարկումներ

- 01.03- Արմեն Մարտիրոսյանը Ազգային ժողովի պատվիրակության հետ մեկնեց ԼՂՀ, որտեղ մասնակցեց
- 02.03 առողջապահության, սոցիալական, կրթական ոլորտներին վերաբերող քննարկումներին:
- 05.03 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց IFES-ի կազմակերպած ընտրական գործընթացներին վերաբերող սեմինար-քննարկմանը:
- 09.03 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկմանը:

- 15.03-18.03 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ազգային ժողովի քառօրյա նիստերի աշխատանքներին:
- 19.03-20.03 ԱՄՆ Սիջազգային Գործերի Ազգային ժողովրդավարության Ինստիտուտի, Մեծ Բրիտանիայի դեսպանատան հրավերով Արմեն Մարտիրոսյանը, Ստյոպա Սաֆարյանը եւ Լարիսա Ալավերդյանը «Ժառանգություն» կուսակցության երիտասարդների հետ մասնակցեցին Ծաղկածորում կայացած սեմինար-քննարկումների շարքի՝ «Հայաստան-Թուրքիա հարաբերությունները» վերտառությամբ:
- 25.03 Արմեն Մարտիրոսյանը USAID-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Գաթինդեր Չիմայի հրավերով մասնակցեց հայ-թուրքական քաղաքականությանը վերաբերող քննարկմանը:
- 25.03-26.03 Արմեն Մարտիրոսյանը Նիդերլանդների, Սլովենիայի եւ Լատվիայի Պառլամենտների Պատվիրակության այցի շրջանակներում մասնակցեց «Պառլամենտական գործունեության ասպեկտները եւ գործառնությունները» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած քննարկումներին:
- 26.03 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց ՀՀԴ կազմակերպած «Սոցիալիստական մոտեցումները Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ-տեղական իրողություններ» վերտառությամբ սեմինար-քննարկմանը:

**Հանդիպումներ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ**

- 03.03 Արմեն Մարտիրոսյանը Ստյոպա Սաֆարյանը «Ժառանգություն» կուսակցության կենտրոնական գրասենյակում հանդիպեցին Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ, Բելգիայի նախկին վարչապետ Վիլֆրիդ Մարտենսի, նրա աշխատակազմի ղեկավար Ինգրիդ Գուսենսի եւ արտաքին հարաբերությունների համձնաժողովի քարտուղար Նիկոլա Բրիեքի հետ: Արմեն Մարտիրոսյանը եւ Ստյոպա Սաֆարյանը ներկայացրին «Ժառանգության » գաղափարախոսության հիմնադրությունները:
- 11.03 Արմեն Մարտիրոսյանը եւ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորները Ազգային ժողովի Կարմիր դահլիճում հանդիպեցին ԵԱՀԿ գործող նախագահ Ժառո Սոարեշի հետ:
- 29.03 Արմեն Մարտիրոսյանը, Ստյոպա Սաֆարյանը եւ Լարիսա Ալավերդյանը «Ժառանգություն» կուսակցության Կենտրոնական գրասենյակում հանդիպեցին Շվեդիայի խորհրդարանի՝ Ռիգստագի հայազգի պատգամավոր, Կանաչների կուսակցության անդամ Իգաբել Դինգիզյանին եւ նրա ամուսնուն:

**Հանդիպումներ եւ այցելություններ**

- 01.03-02.03 Արմեն Մարտիրոսյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանդիպեց ուսուցիչների եւ ԼՂՀ Ազգային ժողովի պատվիրակության անդամների հետ:
- 03.03 Արմեն Մարտիրոսյանը «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությամբ Կոնգրես հյուրանոցի «Բոլլ» սրահում մասնակցեց Եվրոպական հարեւանության քաղաքականության ծրագրի (ԵՀՔ) 2009թ իրականացման՝ քաղաքացիական զեկուլյցի ներկայացմանը:
- 05.03 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ջորի Բալայանին նվիրված երեկոյին Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը:
- 06.03 Արմեն Մարտիրոսյանը «Ժառանգություն» կուսակցության Կենտրոնական գրասենյակում հանդիպեց քաղաքացիների հետ:
- 10.03 Արմեն Մարտիրոսյանը եւ «Ժառանգություն» խմբակցության պատգամավորները ԱՄՆ դեսպան Մարիա Յովանովիչի հրավերով մասնակցեցին Մարիամ Սուխոլոյանին՝ «Խիզախ կին» մրցանակի հանձնման արարողությանը:
- 20.03 Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա կապակցությամբ Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Բելգիայի պատվավոր հյուպատոս Գրիգոր Բադիրյանի եւ Վալոնի Բյուլետլ Ինտերնասիոնալի կազմակերպած ընդունելությանը Գոլդեն Թուլիփ հյուրանոցում:
- 22.03 Բրիտանական խորհրդի եւ Բրիտանական դեսպանատան հրավերով Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Բրիտանական ֆիլմերի 8-րդ ամենամյա փառատոնի պաշտոնական բացման արարողությանը, ինչպես եւ՝ «Դքսուհի» ֆիլմի ցուցադրությանը:
- 24.03 Արմեն Մարտիրոսյանը եւ Ստյոպա Սաֆարյանը Ազգային ժողովում հանդիպեցին պրակտիկանտների հետ: Խոսվեց ներքաղաքական եւ արտաքին հարաբերությունների մասին:
- 30.03 Արմեն Մարտիրոսյանը Նկարիչների միության տանը ներկա գտնվեց Հաղթանակ Շահունյանի նկարների ցուցահանդեսին:

## **ՁԼՄ-ներ**

### **Մամլո ասուլիսներ**

24.03 Արմեն Մարտիրոսյանի մամլո ասուլիսը «Դե ֆակտո» ակունքում:

### **Խորհրդարանական ժամ**

12.03 Արմեն Մարտիրոսյանը Հանրային հեռուստաընկերության «Խորհրդարանական ժամ» հեռուստածրագրի շրջանակներում խոսեց ՀՀ իշխանությունների վարած սխալ արտաքին քաղաքականության, մասնավորապես՝ ԼՂՀ-ին բանակցային կողմ լինելու մասին:

### **Քաղաքացիներ**

2009 թվականի սեպտեմբեր ամսին քաղաքացիների կողմից Արմեն Մարտիրոսյանին հասցեագրվել է 1 դիմում, որի առնչությամբ դիմում է հղվել ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին:

### **Դիմումներին ի պատասխան հարցումներ եւ քաղաքացիներին պատասխաններ**

04.03 ՀՀ Առողջապահության նախարար

04.03 ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանին:

26.03 Կառավարությանը գրավոր հարցում՝ Երեւանի 16-րդ թաղամասի գազաֆիկացման եւ տրանսպորտային խնդիրների առնչությամբ:

27.03 ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանին՝ երաշխավորագիր

31.03 ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Մխիթար Մնացականյանին

### **Պաշտոնյաների եւ Հասարակական կազմակերպությունների կողմից հասցեագրված նամակներ**

18.03 Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալից՝ ի պատասխան գրավոր հարցման

24.03 ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալից՝ ի պատասխան գրավոր հարցման: